

Արևիկա

Պարսկահայ աշուղ

891.99.092

Ն-79

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

**ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ**

**ԱՇՈՒՂ, ԱՄԻՐ ՕՂԼԻ**

(ՆՐԱ ՄԱՀՈՒՈՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ,)



ՎՆԵՆՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1930

91.99.092

Ե-79

Երևանի «Արևիկա» գրական տնակի կողմից  
ըստ Գրաքննարանի

ՊԱՐՍԿԱՆԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

- 6 NOV 2011

894.99.092

Ե - 79

4.

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

**ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ**

**ԱՇՈՒՂ, ԱՄԻՐ ՕՂԼԻ**

(ՆՐԱ ՄԱՀՈՒՄՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)



285



1164814 - Ս. ՂԱԶԱՐ

1930

08 APR 2013

65.692

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԱՇՈՒՂԱՄԻՐ ՕՂԼԻ

(ՆՐԱ ՄԱՀՈՒՄՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

ՆՐԱ - ՁՈՒՂԱՅԻ հայոց գերեզմանատա-  
նը, մի անշուք շիրմի տակ, հանգչում են  
աճիւններն Սմիլ օղու աշուղի, որ 18րդ  
դարի երկրորդ կիսին սլաբական հայ երգի-  
ծական գրականութեան ռահվիրայն հան-  
դիսացաւ:

Նրա հողակոյտի վրայ դրած է անտաշ  
մի քար, որի վերեւի մասում քանդակւած  
է երգչի նկարը: Այդ նկարում աշուղը  
ծալապատիկ նստած նւագում է չօնքուրը  
ձեռքին. նա իր խորհրդաւոր տեսքով ան-  
ցեալի փառքն է յիշեցնում և համակում  
դիտողին մի շարք ուրախ և տխուր ըզ-  
զացումներով: Քարի վերեւում, երկու ան-  
կիւններից, ողջունում են երգչին երկու  
հրեշտակներ, իսկ ցածի մասում փորա-  
գրուած է հետեւեալ անպաճոյճ ոտանա-  
ւորը.

1283  
39

Ամիր օղլու է այս տապան,  
 Որ խօսէի շատ տաղարան,  
 Յաւուրս միոյ էի կենդան,  
 Շրջէի ես աշխարհ համայն:

Յորժամ եկի ի գերեզման,  
 Հինգ գագ կտաւ ունիմ պատան,  
 Գիրս կարգէք ամենեքեան,  
 Միտ ամէք ձեր օրն մահուան:

Ոչ թէ մահն էր իմ միայն,  
 Կա հասարակ մարդուս բնութեան,  
 Արդ փոխեցայ ստտէն առ այն,  
 Որ ետ ինձ շունչ կենդանական:

Ի 1826 թն. փրկչական ի Նախայ 25:

Ահա զբաւոր այս յիշատակարանը միայն  
 մնացել է Ամիր օղլի աշուղի մասին. իսկ  
 նրա կեանքի, գործունէութեան և այլ գծերի  
 վերաբերմամբ չկայ ոչ մի ուրիշ յիշա-  
 տակագիր և մինչեւ օրս էլ նա չէ ու-  
 սումնասիրուած: Կարելի է ասել նա մո-  
 ռացուած է: Նրա մասին պէտք եղած  
 նիւթերի մէկ մասը հաւաքել ենք մի քանի  
 ծերունիների պատմածներէց, որոնք մինչև  
 այսօր էլ իրենց յիշողութեան մէջ դեռ վառ

1. Նոր-Ջուղայի հայոց գերեզմանատանը մի ամ-  
 բող օր ման գալուց յետոյ միայն յաշուղեց մեզ գտնել  
 աշուղ Ամիրի գերեզմանաքարը, որի կէտը ծածկուած էր  
 հողով:

Ա. Ե.

են պահել երգչի յիշատակը: Բայց այդ  
 տեղեկութիւններն էլ թերի են և կցկտուր:  
 Այնու ամենայնիւ մենք տանք այն ատաղձը,  
 ինչ որ ունինք մեր ձեռքի ներքոյ:

ԱՄԻՐ ՕՂԼՈՒ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Նոր-Ջուղայի և հնդկահայ պատմու-  
 թեան մէջ՝ երգչի տոհմի մասին յիշատակ-  
 ւում է այսպէս, որ Ամիրեանց ազգատոհմից  
 աղա Յովսէփ Յովհաննէս Ամիրեանը, 18րդ  
 դարում թողնելով Նոր-Ջուղան, անցնում  
 է Ջալա կղզու Սմարանգ քաղաքը, ուր  
 զբաղւում է աֆրոնի գործով և կարճ ժա-  
 մանակամիջոցում ահագին հարստութիւն  
 է դիզում: Յետագայում նրա հարստութիւնն  
 է անհաւանում, որ այլեւս նա կա-  
 այնքան է մեծանում, որ պահում և երբ  
 նոնաւոր հաշւետոմար չի պահում և երբ  
 հարցնում են իրեն, թէ ինչպէս է վըս-  
 տահանում իր գործակատարներին՝ պա-  
 տասխանում է. «Մինչ Տէր տայ ինձ առանց  
 չափոյ, զիմրդ հնար ինձ դնել կըոոյ»:  
 Նա ծրագրում է դրամով գնել իր նախ-  
 նիքների երկիրները, այն է Ղարաբաղի  
 աշխարհը ֆայտակարանով հանդերձ: Սա-  
 կայն քաղաքական ինչ ինչ հանգամանք-  
 ներ արգելք են հանդիսանում և Ամիր-

խանը չի կարողանում իրագործել իր ծրագիրը: Սրա եղբայր պարոն Ամիրխան Թ. Ամիրեանը նոյնպէս իր ժամանակի համբաւաւոր վաճառականներէն է եղել Նոր Զուղայում:

Ահա յիշեալ հարուստ վաճառական Ամիրեան ազգատոհմի ծոցում մնել և մեծացել է երգիչը, 18րդ դարի երկրորդ կիսում: Նրա ազգականներից այժմ ապրում են Նոր-Զուղայում Պ. Ամիրխան և Պ. Յովհաննէս Ամիրխանեան եղբայրները և սրանց ձերուհի մայրը՝ Տիրուհին: Վերջինս հաղորդեց մեզ մի քանի տեղեկութիւններ Ամիր օղու կեանքի մասին, որոնք սակայն դարձեալ չեն լրացնում և լուսարանում երգչի կեանքի և գործերի նկարագրութիւնը:

Ամիրը, Տիրուհու ասելով, ծնւել է մօտաւորապէս 1740 թւականին, Բուրւարիում: Դա Պարսկաստանի Սպահան նահանգի հայաբնակ գաւառներից մէկն է, որի բնակիչները բեկորներն են այն մեծ գաղթականութեան, որ տեղի ունեցաւ Փլ. դարում (1606 թ.) Շահ-Աբբասի ձեռքով: Այդ գաղթական գիւղացիներից մէկն է եղել Ամիրի հայրը՝ Ամիր խանը: Յայտնի չէ, թէ ինչ տեսակ մարդիկ են եղել երգչի ծնողները և ինչ ազգեցու-

թիւն են ունեցել իրենց գաւառի վրայ: Միայն պարզ է, որ նրանք եղել են գիւղի հարուստ ու յայտնի օջախներից մէկը և ապա գիւղից տեղափոխւել են Նոր-Զուղա.

Ամիրն սկզբնական ուսումն ստանում է գիւղում, ժամանակի գրագէտներից մէկի մօտ: Այդ ժամանակաշրջանի գիւղերում ղարոցներ չկային. գրել-կարդալ սովորել ցանկացող պատանիները գիւղի գրագիտութիւն իմացող մարդկանց մօտ էին ուսանում, որ գլխաւորապէս լինում էին հոգևորականները: Դրանք Տէր-Թողիկեան մանկավարժութեան տիպիկ ներկայացուցիչներն էին: Գիւղերի իրականութիւնն այդ էր: Երեւում է, որ Ամիրի ուսուցիչն էլ եղել է գիւղի բահանան: Բայց ինչ է տալիս նա իր սանին: Ինչ կարող էր տալ Պարսկաստանի խաւար անկիւնում մնած և դաստիարակւած մի տիրացու: Նրա գիտութեան պաշարն այնքան աղքատիկ է լինում, որ բաց ի հասարակ գրագիտութիւնից՝ ուրիշ բան չի սովորեցնում իր աշակերտին: Ամիրը սակայն ուշիմ և սրբամիտ երեխայ լինելով՝ առաջ է գնում ինքնաշխատութեամբ: Այնուհետեւ նրա համար ստեղծւում են աւելի նպաստաւոր պայմաններ, երբ նրա ծնողները խաւար գիւղից տեղափոխւում են Նոր-Զուղա:

Սպահանի արուարձանն է Կոր-Ջուղան, որ փռած է նրա հարաւային կողմը, երեք քառորդ ժամ հեռու, մի ընդարձակ տարածութեան վրայ: Կոր-Ջուղան այդ ժամանակ, ինչպէս և այսօր, շրջակայ հայաբնակ գիւղերի համար մի տեսակ լուսաւորութեան կեդրոն էր:

Երկու տեսակետով այդ արուարձանը երգչի կեանքի համար դառնում է արժէքաւոր: Առաջինն այն է, որ նա գիւղական խաւար աշխարհից ընկնում է լուսաւոր և առաջադէմ մի շրջապատի մէջ: Այդտեղ նա ծանօթանում է ս. Ամենափրկչեան վանքի հետ, որ այդ միջոցին կուլտուրական մի տեսակ օջախ էր: Տեսնում է նա վանքի փառաւոր դպրոցը, որ այն ժամանակ սկսել էր հայկական կեանքի մտաւոր և գրական ասպարիզում նշանակութիւն ունենալ: Տեսնում է տպարանը, հարուստ գրադարանը: Հասկանալի է, թէ այդ բոլորն ինչ խոր տպաւորութիւն պիտի գործէին սեման տենչով տոգորւած պատանու մտքի վրայ:

Երկրորդ աւելի ուշագրաւ հանգամանքն այն է, որ այդ փոքրիկ արուարձանում ձեւակերպւում է նրա աշուղական ապագայ կերպարանքը: Այդ դարում Կոր-Ջուղայում բնակւում էին մի քանի յայտ-

նի հայ աշուղներ, որոնցից յիշատակւում է Բաղէր օղլին: Ամիրն ընկնում է նրանց շրջանի մէջ: Այդ աշուղները նրա հոգու և մտքի վրայ այնքան խոր տպաւորութիւն են թողնում և նա այնքան է յափշտակւում նրանց քնարով, որ իր մտքի մէջ վճռում է աշուղ դառնալ: Այդ գաղափարը դառնում է նրա իղէալը, նրա պաշտամունքի առարկան և նա ամբողջ հոգով ու սրտով նուիրւում է իր պաշտած իտէալին: Այնուհետեւ նա իր օրերի մեծ մասն անցկացնում է աշուղների մօտ և անգիր սովորում նրանց յօրինած երգերը: Ծնողները տեսնելով իրենց զաւակի աշուղութեան հանդէպ տածած անհուն սէրը՝ մի շօնգուր են գնում և նուիրում նրան: Այդ օրուանից նա աշակերտում է աշուղներին և ամբողջ հոգով նուիրւում իր շօնգուրին: Դնորհիւ իր սրամտութեան և ընդունակութեան, կարճ ժամանակամիջոցում սովորում է նա աշուղութեան արցում սովորում սկսում է զարգանալ: Այդ դպրոցում սկսում է զարգանալ և նրա նեղ ու սահմանափակ մտաւոր նալ և նրա նեղ ու սահմանափակ մտաւոր հորիզոնը: Ուսուցիչ աշուղներն իրենց երգերով կերպարանափոխում են նրա միտքն ու հայեացքները և պատրաստում են մի աշուղի, որ յետագայում պարսկահայ աշուղական գրականութեան յայտնի երգի-



ծարանը պիտի հանդիսանար: Այդտեղ էլ նա սկսում է երգեր ու ոտանաւորներ յորինել, ազդելով, ի հարկէ, իր ուսուցիչների մօտիւներից: Թէ աշուղական այդ դպրոցում նա զլիսաւորապէս ս'ւմ ձեռքի ներքոյ է կազմակերպւում և աշուղական ինչ հիմնաւոր կրթութիւն տանում, հաստատ չգիտենք: Այնուհետեւ մենք նըրան տեսնում ենք ճանապարհորդելիս ղէպ ի Մուշ: Նա բաւական չհամարելով իր ստացած աշուղական կրթութիւնը, ըստ ընդունուած սովորութեան, Թաւրիզի վըրայով գնում է «Մշու Սուլթան Ս. կարապետ», աշուղական շնորհք ստանալու համար: Այնտեղ ուխտ անելուց, մատաղ կտրելուց յետոյ, վերադառնում է Նոր-Ջուղա և իրեն նւիրում աշուղութեան արւեստին: Դրանից յետոյ, իրրեւ աշուղ երգիչ, չօնգուրը ձեռքին, թափառելով իսպահանի փէրիա և Չահարմահալ գաւառները, ինչպէս նաեւ Բասրա, Բաղդատ, իր երգիծական ձիրքով ուրախացնում է իրեն շրջապատող ժողովրդին և առանձին փայլ տալիս նրա հարսանիքներին և խընջոյցներին: Նա Նոր-Ջուղայում մրցում է Թաւրիզից եկած նշանաւոր մի աշուղի հետ, յաղթում նրան և հռչակ է ձեռք բերում:

Ամուսնանում է փէրիսի հետ, որը վախճանւում է 1818 թւին<sup>1</sup>, իսկ ինքը մեռնում է կնոջից ութը տարի յետոյ, այն է 1826 Յուլիս 25ին:

### ԱՄԻՐԻ ԲՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ԳՓԵՐԸ

Ամիր օղլին բնաւորութեամբ խոնարհ, սրամիտ և վառվռուն մարդ է եղել. նրա սրամտութեան մասին մեր ժամանակակից ծերունիները պատմում են հետեւեալը.

Մի անգամ երեւելի մի աշուղ լսած լինելով Ամիր օղլու համբաւը, գալիս է Նոր-Ջուղա, նրա հետ մրցելու համար: Նա քաղաք մտնելիս, մի տան դրան մօտ հանդիպում է Ամիր օղլուն, բայց չի ճանաչում թէ նա է, ուստի հարցնում է նրան, թէ՛ «ո՞րտեղ է բնակւում Ամիր օղլին». նա պատասխանում է թըրքերէն՝ «գետը ման ամ» որ երկղիմի մտքով նը-

1. Ամիր օղլու գերեզմանի աջ կողքին ամփոփւած է փէրիսի մարմինը, որի գերեզմանաքարի վըրայ գրւած է այսպէս.

Այս է տապամ փէրիմիմ,  
 Ամիր օղլու կողակցիմ,  
 Որ փոխեցաւ յաշխարհ վերիմ,  
 Բ. Ճ. Բ թվիմ և չամիրա Դ. Ը-իմ.

շանակում է «տես, ես եմ», բայց օտարական աշուղն իսկական մտքով է հասկանում այդ արտայայտութիւնը, այն է «չեմ տեսել», ուստի թողնում, հեռանում է: Այնուհետեւ օտարականը փողոցում կանգնած մարդկանց է հարցնում, թէ «ո՞ր տեղ կարելի է տեսնել Ամիր օղլուն»: Նրանք ցոյց են տալիս դրան մօտ կանգնած աշուղին. օտարականը զարմացած գալիս է դարձեալ Ամիր օղլու մօտ և հարցնում է թէ՛ «դո՞ւ ես Ամիր օղլին»: այս անգամ նա պատասխանում է. «Թե՛ս ման ամ», որի երկզիմի նշանակութիւնն է «ճանաչի՛ր, ես եմ», բայց օտարականը դարձեալ իսկական մտքով է հասկանում, այն է՝ «չեմ ճանաչում»: Երբորդ անգամ նորից է ներկայանում Ամիր օղլուն. նա պատասխանում է. «Ի՛իլ ման ամ», որի երկզիմի նշանակութիւնն է «Գիտցի՛ր, ես եմ», սակայն օտարականն իսկական մտքով է ըմբռնում, այսինքն «չգիտեմ» և հեռանում է: Վերջը, սակայն, օտարական աշուղը հասկանալով Ամիր օղլու՝ առածների միտքը՝ ամօթահար հեռանում է Նոր-Ջուղայից, առանց այլ ևս նրան տեսնելու:

Ահա այն հատ ու կտոր տեղեկութիւնները, որ կարողացել ենք գտնել երգչի

մասին. իսկ նրա կեանքի այլ հանգամանքները՝ թէ ի՞նչպիսի միջավայրում և հանգամանքների մէջ զարգացել ու կերպարանւել է նրա երգիծական ձիրքը, ի՞նչ գործունէութիւն է ունեցել, ո՞վքեր են նրա կրթութեան վրա դրել իրենց ինքնուրոյն դրոշմը, ո՞ւր և ի՞նչպիսի շրջաններում է անցկացրել իր օրերը. — առհասարակ այս հարցերի մասին ոչինչ տեղեկութիւններ չկան. ուրեմն ասենք մի քանի խօսք էլ նրա երգերի մասին:

#### ԱՄԻՐ ՕՂՂՈՒ ԵՐԳԵՐԸ

Ամիր օղլու երգերը հաւաքւած չեն առանձին մի դավթարում, այլ ցան ու ցրիւ են այս ու այն ձեռագրեր՝ տետրակների մէջ՝ ինչպէս էրեւում է. աշուղը հոգ չի տարել իր երգերն առանձին մի դավթարի մէջ հաւաքելու: Նրա երգերից շատերը ձեռագիրների արտագրութեան ժամանակ փոփոխութեան և աղաւարման են ենթարկւել, իսկ մի քանիսն էլ բերնից բերան անցնելով՝ կրճատւել և մնացել են հազիւ մի քանի տողեր: Սակայն այն բոլոր երգերը, ինչ որ այսօր ունինք մեր ձեռքի տակ՝ պահել են իրենց վաղեմի հարազատութիւնը:


Ամիր օղու ստեղծագործութիւնները կարելի է բաժանել երկու շրջանի. 1) խաղաղ և 2) փորորկայից:

Առաջին շրջանն սկսում է 1757 թւին և տեւում է մինչեւ 1778 թւականը: Դա Շահ Քէրիմ խանի թագաւորութեան ժամանակաշրջանն է, որ մի նշանաւոր էջ է գրաւում պարսից պատմութեան մէջ: Արդ այն շրջաններից մէկն է, որ Պարսկաստանը բաղաբական համեմատաբար բարեկեցիկ կեանք է վարում: Շահը բարձրանալով գահի վրայ՝ զսպում է ներքին ապստամբութիւնները և ամբողջապէս ներկում իր երկրի բարենորոգութեան և վերաշինութեան գործին: Նա Շիրազում կառուցել է տալիս գեղեցիկ ապարանքներ, շէնքեր, որոնք մինչեւ այսօր էլ դեռ կանգուն են և կազմում են Շիրազի ճարտարապետական գարդերը: Բայց շահը ոչ միայն վերանորոգչական գործերով է զբաղւում, այլ և նա խիստ բարեհաճ վերաբերմունք և հոգատարութիւն է ցոյց տալիս ղէպի իր հպատակները, յատկապէս առանձին բարեացակամութեամբ է վարւում Նոր-Ջուղայեցիների հետ: Նրա թագաւորութիւնը տեւում է 21 երկար տարիներ, որի ընթացքում ժողովուրդն ապրում է խաղաղ ու հանգիստ պայմանների մէջ և լծւում իր աշխա-

տանքին: Կեանքն առաջ է գնում իր բնական ուղիով, սակայն զրականութիւնը: Գրականութիւնը, արեստները և կուլտուրական առաջխաղացումները խաղաղ ժամանակաշրջանի ծնունդ են: Սա մի պատմական ճշմարտութիւն է, որ կարող ենք տեսնել դարերի պատմութեան մէջ: Քէրիմի թագաւորութեան ժամանակամիջոցը այդպիսի մի նպաստաւոր շրջան էր: Եւստի այդ խաղաղ ժամանակաշրջանում է իր երգիծական տաղերը, որոնց մէջ նա երգիծելով ծաղրում է իր ժամանակի Նոր-Ջուղայի ընտանեկան կեանքը, իր տիպիկ ղէմքերով. բայց այդ մասին կը խօսինք բիշ յետոյ:

Երկրորդ շրջանը կազմում է 1779-1824 թւականը, որ ընդգրկում է երգչի յետագայ ամբողջ կեանքը: Այդ շրջանին նա գրում է իր խրատական, բարոյական երգերը, որոնցով նա մի շարք բարոյական խրատներ է տալիս իր ունկնդիրներին և ապա աշխարհի ունայնութիւնը պատկերացնելով՝ հրամեշտ է տալիս իր կեանքին:

Ամիր օղի, հիկն գազ կուռն ա'ն, գևա, ագատի'ր ևս աշխարհի դարդ ու սարկն քեզ:



Սակայն երկրորդ շրջանում Ամիր օղլին ապրում է խռովայոյզ ժամանակներում: Քէրիմ խանից յետոյ եկող անիշխանութեան շրջանն է դա: Շահի մահից յետոյ Պարսկաստանի քաղաքական դրուածիւնը վրդովւում է: Մի շարք բախտախնդիր նախարարներ՝ Զէքի խան, Նազար Ալի խան, Ալի Մուրատ խան, Ալնազի խան, Մահմադ խան և այլն. իրանի գահին տիրելու նպատակով՝ զինւում են միմեանց դէմ, ոչնչացնում իրար և անդար խռովութիւններ յարուցանում: Քաղաքական ներքին այդ փոթորիկների հետեւանքն այն է լինում, որ հպատակ ժողովուրդները, նա մանաւանդ Նոր-Ջուղայի և Շիրազի հայերը ապրում են շատ ծանր պայմանների մէջ: Նոյն ցաւալի պատկերն է ստեղծւում նաեւ գաւառներում: Լոռերն ու Բախտիարցիները երկրում տիրող անիշխանութիւնից օգտւելով՝ յարձակւում են անգէն և անպաշտպան զիւղացիների վրայ, մեծամեծ գումարներ պահանջում և կամայական բռնութիւններով ճնշում, ստրկացնում են նրանց: Ժողովրդի դրութիւնն աւելի անտանելի է դառնում, երբ սովը մուտք է գործում Պարսկաստանում:

Թէ ինչո՞ւ Ամիր օղլու երգերի մէջ

չկան ժողովրդի ցաւերն ու տանջանքները նկարագրող երգեր, արդեօք նա չէ՞ երգել իր ժամանակի բռնակալներին գործած բարբարոսութիւնները: Արդեօք նրա չօնգուրը չի՞ արձագանգել իր շրջապատի ժողովրդի վշտերն ու ցաւերը: Այս հարցերին իրականապէս պատասխանելու համար, տարաբախտաբար կուան չունինք մեր ձեռքում: Բայց անկարելի է մտածել, որ նա երգած չի լինի ժողովրդի տառապանքները: Հապա ո՞ր են դրանք: Ո՞վ գիտէ ո՞ր տան դարակի փոշիների ներքոյ, մի զրչեայ մատեանի մէջ, հանգչում են այդ կտորները, որոնց՝ զուցէ ժամանակը յայտնագործէ: Այսպէս կամ այնպէս՝ այժմ այսքանը պարզ է, որ այն բոլոր երգերը, ինչ որ ունինք երգչի քնարից, մեծամասնութեամբ երգիծական բովանդակութիւն ունին և ցոյց են տալիս, որ Ամիր օղլին օժտւած է եղել թէ՛ աշուղ-երգչի յատկութիւններով և թէ՛ երգիծաբանութեան շնորհք է ունեցել: Աւելին. նա իր դարի միակ կատակարան, երգիծող աշուղն է և հենց իր այդ ուղղութեամբ էլ ժամանակակից Պարսկահայ աշուղների տարեւազրութեան մէջ նշանաւոր տեղ է բռնում և արժանի է առանձին ուսումնասիրութեան:

Մենք մտենալու ենք Ամիր օղլուն այդ տեսակէտից և վերլուծելու ենք նրան որպէս զառնադասն-կերգիծող:

1. Երգիծական կրգերը: Ամիր օղլու երգիծական երգերը ոչ միայն գեղեցիկ են և սրամիտ, այլ և յայտարար են նրա երգիծական ձիրքին: Այդ երգերի մէջ աշուղը դրել է եւ սատիրա եւ հումօր:

Ինչ է երգել սակայն Ամիրը, հասարակական կեանքի ո՞ր էջն է հումօրի ենթարկել, մարդկանց ո՞ր պակասութիւնները և բարոյական թուլութիւնները ծաղրել և հեզնել, ինչպիսի՞ տիպեր է մտրակել և խարազանել:

Ամիր օղլին իր ապրած միջավայրում (գլխաւորապէս Նոր-Ջուղայում) երկար ժամանակ շփելով զանազան ընտանիքների հետ, հնարաւորութիւն է ունեցել մօտիկից ուսումնասիրելու և ծանօթանալու այդ շրջապատի ընտանեկան կեանքի և բազմատեսակ բնաւորութիւնների ու զանազան տիպերի հետ: Նա հետաքրքրութեամբ դիտել է ժամանակակից ընտանիքը և այդ միջավայրից էլ վերցրել իր նիւթերը: Այդ երգերով տալիս է նա մեզ իր դարաշրջանի ընտանեկան կեանքի պատկերը, իր բացասական ու ծիծաղելի կողմերով: Այնտեղ տեսնում էք զուր մի շարք

տիպեր, որոնց մեծ մասը, եթէ ոչ բոլորը, աշուղը վերցրել է իրականութիւնից: Գուր տեսնում էք նրանց ընտանիքում, լսում էք նրանց խօսակցութիւնը, վէճը, բանակութիւնը: Ծանօթանում էք նրանց հետ, որոնցից ամէն մէկն աչքի է ընկնում իր բնորոշ գծերով: Ահա, այնտեղ են ընտանիքի բռնակալ և «քաֆիր» պառաւը, «արիւնարբու» սկեսրայրը, կոռւարար «տէգէրակինը» և աներես հարսը: Ընտանիքում հարսն և կեսուրը կուում են անդադար և թունաւորում ընտանեկան խաղաղ կեանքը: Կուում են նաեւ անվերջ երկու տէգէրակիները: Այդպէս՝ ընտանիքում շարունակ կռիւ, ծեծ, հայհոյանք, երկպառակութիւն. իսկ ինչ պիտի ուսանի այդ օջախի մէջ անտղ մանուկը. պարզ է, որ նա պիտի իւրացնէ այն ամէնը, ինչ տեսնում է իր շրջապատում: Այնտեղ է նաեւ ընտանիքի անմեղ աղջիկը. նա ապրում է երազների մէջ, սիրոյ կրակն այրում է նրա մատաղ կուրծքը, բայց նա չի կարողանում սիրել, իր սէրն ազատ արտայայտել, որովհետեւ ընտանիքի բռնակալ պառաւը կաշկանդել, շղթայել է նրան և նա տանջւում, այրւում է անվերջ սիրոյ վառ զգացումով:

Ահա այս բոլորն աշուղին առատ նիւթ

են մատակարարում և նա երգիծական  
քնարը ձեռքին և ծիծաղը բերնին՝ սրամիտ  
ծաղրի և հեգնութեան է ենթարկում այդ  
երեւոյթները: Ահա ձեզ մի քանի նմուշներ.

Եար, եկ քեզ մին խբար տամ,  
Տես ինչ լեզվ արագ ամ տեսէլ.  
Քո սկեսուրն մթին տեղ էր,  
Կեսրօրիդ նասաղ ամ տեսէլ.

Նստէլ էր ուղտի քամակին,  
Մին սէվ ջվալ կէր շալակին.  
Ճերմակ ձիգ շորէր կէր խագին,  
Էն էլ տասնչորս գազ ամ տեսէլ:

Սատանէքոնց դա կխաբէր,  
Էդ տես սրչափ չարազատ էր.  
Լալման խարսին կխոտէր,  
Թէ ջրումդ չարաղ ամ տեսէլ:

Այս և միւս մի քանի երգերից երեւում  
է, որ Ամիր օղլին ունի իր սիրոյ առար-  
կան, իր սրտի թագունին: Թէ Ընչպէս  
առաջացաւ նրա մէջ այդ սիրոյ զգացումը,  
մեզ յայտնի չէ. այսքանը միայն պարզ  
է, որ նա սիրահարած է և օր ու գիշեր  
տանջում է իր գեղեցիկ եարի սիրովը:  
Բայց երգիչը չի կարողանում գնալ իր  
սիրականի տունը և նրան ազատ սիրել,  
որովհետեւ ընտանիքի բռնակալ պառաւր

բարկանում է, «աչկէրն խողում ա», եր-  
բեմն էլ «կոնէն բոնում, շպրտում ա,  
զցում աուի ջուրն» և երգչին սաստիկ  
տանջանք է պատճառում: Այսպէս՝ երգչի  
համար ստեղծւած է մի անորոշ, տարտամ  
վիճակ և նա կարծես այդ դրութիւնից  
ազատուելու համար, դիմում է «ազիզ»  
եարին և իր վիճակը նրան պատկերա-  
ցնում.

Սկեսուրդ աչկէրն խողում ա,  
Յեփ գոլման ամ, բարկանում ա.  
Կոնէս բոնում շպրտում ա,  
Գձում աուուի ջուրըն՝ ազիզ:

Պառաւի ձեռքում երգիչը տանջւում է  
գերու նման և նրա ահ ու սարսափից  
միշտ զաղտնի է գնում «ազիզ»ի տունը:  
Մի օր էլ՝ փախչում է կտուրը, որ ա-  
զատուի պառաւի ձեռքից, բայց «բիմօրվաթ  
քաֆէրն աթարոցն և դանակն» առնելով՝  
բարձրանում է Ամիր օղլու ետեւից կտու-  
րը, փակում դուռը և ծակծակում է խեղճ  
աշուղի մարմինը.

Կտուրն ելայ՝ դուռն փակէց,  
Աթարոցն վեռէց՝ թակէց.  
Վէր գձէց, ջանս ծակծակէց,  
Գանակ կէր խտուրն՝ ազիզ:

Համ կծակէր, համ կկծէր,  
 Համ յետ կդառնէր, կանիծէր.  
 Ուզում էր արունս ծծէր,  
 Էդ բեմօրվաթ քաֆէրն՝ ազիգ:

Բայց աներես պառաւը դրանով էլ չի  
 բաւականանում. նա շամփուրը տաքա-  
 ցնում և վազում է երգչի ետեւից, որ դա-  
 ղի նրա մարմինը.

Էդ քաֆէրն տիր դօշաղ էր,  
 Դեռ լէվ էր, որ նաչաղ էր.  
 Ուզում էր ջանս դաղդաղէր,  
 Բերէլ էր շամփուրն՝ ազիգ:

Երգիչը յուսահատուած աղաչում է պա-  
 աւին և չորս անգամ նրա ձեռքը համ-  
 բուրում, որ իրեն խնայի, բայց «չուն»  
 պառաւը, մթին հաշտում բռնում է երգչին  
 և մի լաւ ձեծում.

Եկաւ բըռնէց մթին հաշտին,  
 Վէր կոխէց, թքէց իւր մշտին.  
 Ամիր օղլուս կող ու կշտին,  
 Տփէց չուր խէրուրըն՝ ազիգ:

Սակայն պառաւը միայն աշուղին չէ,  
 որ տանջում է, նա դառնացնում է նաեւ  
 իր մարդի վիճակը: Սյսպէս, նա ցան-  
 կանաւով ազատ ապրել և կեանքի բարի-  
 բը միայնակ վայելել, իր մարդին «խա-  
 բով» զիւղն է ուղարկում և միայնակ  
 ուտում է տան իւղն.

Ուր մարդին տվէց դեղն,  
 Խաբով զրկէց յերկար գեղն.  
 Մարդից գաղտնի կերաւ եղն,  
 Էս անիծած, գող պառաւն:

Անցնում են օրեր: Մարդը վերադառ-  
 նում է զիւղից, սակայն «հաչաչան քօփակ  
 պառաւը» բռնում է մարդու բեղիցն և  
 դուրս անում նրան տանից.

Մարդն յետ եկաւ գեղիցն,  
 Պառաւն բռնեց բեղիցն,  
 Դուրս արաւ մարդին տանիցն,  
 Հաչաչան քօփակ պառաւն:

Սյնուհետեւ պառաւն օրերով քէֆ է ա-  
 նում, բոլորի հետ դումար խաղում, մազ-  
 դաքի ծամում, երբեմն էլ՝

Մարդի միրուքն էր նա խուզում,  
 Ձեռնէրով աչքերն էր բզում.  
 Սիրտն ջահէլ մարդ էր ուզում,  
 Ձէր ամաչման շուն պառաւն:

Վերջ ի վերջոյ հեշտասէր պառաւը  
 թողնում է իր մարդուն և ամուսնանում  
 մի ջահէլի հետ. իսկ

Խարստանիքին պատիւ արաւ,  
 Ողջ մարդկերանց տունն տարաւ,  
 Ինչ որ եփէց յինքն կերաւ,  
 Քաղցած թողէց դեւ պառաւն:

Աներես պառաւից յետոյ, Ամիր օղլին մի այլ տեղում, երգի նիւթ է դարձնում աներես հարաներին, որոնք աշուղին խաբելով տուն են տանում և սկսում են ծեծել.

Նարինջ տըվին, ասին՝ արի-  
Ես էլ մին փոքր թամախի արի-  
Երբ տուն տարան, քեզի բարի,  
Տես թէ ինչ քօթակ ին տալման:

Գձէլ ին մին մթին օթախ,  
Սպանում ին նահախ-նահախ.  
Վրայ ին դարձէլ աջ ու ձախ,  
Չոք գմնէ դանակ ին տալման:

Հարաներից հետոյ Ամիր օղլուն, նոյն դրութեան են ենթարկում երկու «գեօզալ» ներք. նրանք երգչին նարինջ են տալիս, «խարխաբում», տուն են տանում, փայտերն առնում և սկսում են ծեծել.

Նարինջ տըվին, խաբխաբեցին,  
Տուն տարան, փէտերն յափեցին.  
Չոք գմնէ վերէս թափեցին,  
Համ աջ և համ ձախ ին տալման:

Ինչանք տվին խեւացէլ ի,  
Ռանգս թոէլ, սեվացէլ ի.  
Թէ մին էլ արեւացէլ ի,  
Ջազմ որ կուէս կախ ին տալման:

Առհասարակ Ամիր օղլու երգիծական ստանաւորները մէկը միւսից աւելի ծիծաղաշարժ են և սրամիտ: Այդ տեսակէտից նրա ձիրքը միանգամայն ինքնուրոյն է:

Բայց մի հանգամանք պէտք է նկատի ունենալ. այդ այն է, որ երգչի նպատակը չէ եղել իր ստանաւորներով ընթերցողներին ծիծաղեցնել և զւարճացնել, այլ, ընդհակառակը, նա երգիծական քննադատութեան ենթարկելով իր ժամանակաշրջանի ընտանիքը և նրա տիպարները, ցոյց է տալիս նրանց պակասաւոր կողմերը և պարսաւում:

Թէ ինչպիսի ախորժ ձեւով և ժողովրդական ոգևով են հիւսւած այդ ստանաւորները, դրա բնորոշ ապացոյցն այն է, որ այսօր Ամիր օղլու ժամանակից անցել է մի ամբողջ դար և դեռ այդ երգերը թէ՛ Նոր-Ջուղայում և թէ՛ Սպահանի Փէրիա և Չարմահալ զաւառներում երգւում են ժողովրդի մէջ:

2. Խրատական բարոյական: Ամիր օղլին բաց ի երգիծական ստանաւորներից՝ թողել է նաեւ ուշադրութեան արժանի մի քանի

1 Այդ երգերի եղանակները թէ՛ իրենց մօտիւններով և թէ՛ սիթմով զանազանում են միմեանցից և որոշ տրամադրութիւն ստեղծում:



խրատական բարոյական հրգեր էլ, որոնք ցոյց են տալիս, որ աշուղը իր ժամանակի գիտուն, փորձառու և իմաստուն մարդկանցից մէկն է եղել: Այդ երգերից մէկում նա անպաճճի խօսքերով խրատում է ազամորդուն, դժբախտութեան ժամանակում շատ երկար համբերել, թէ՛ բարեկամի և թէ՛ թշնամու միշտ հաւասար ներել և բախտի վրայ չբարկանալ, չսրբունելիլ, այլ ընդհակառակը, միշտ ջանալ և միշտ նեղութիւն կրել, մինչեւ բախտի օգնելը: Մի ուրիշ տեղ աշուղը խրատում է ազամորդուն, գիշեր ցերեկ Աստուծոն աղօթել, հեռու մնալ չար ճանապարհից և չգնալ չար «սատանի թեւովն»: Ապա նա աշխարհային կեանքի ունայնութիւնը պատկերացնելով յորդորում է «դովլաթ» և զանձ չղիզել, որովհետեւ այդ ամենը անցողական են և ապարդիւն. նա յիշեցնում է մեր մահւան օրը և խրատում է բարի գործել: Այնուհետեւ իր խօսքն հարստին ուղղելով, ասում է.

Դու միշտ յուսացել աս քո աշխատանքն,  
Միտ չես ամուսն յետիդ օրէն վախճանքն.  
Էդքան որ բողբոջել աս դովլաթ ու կայքն,  
Եարաք ինչ կտանէս էս աշխարհէն քեզ:

Իսկ մի այլ տեղում Ամիր օղլին, իրեն բարի ծերունի, խրատում է իմաստուն մանուկին, որ իր հօրն ուրախացնի և չլինի նրա համար տրտմութիւն. աշուղն ասում է, որ բարի զաւակը ծնողաց համար պարծանք է և իւրաքանչիւր քաջ զաւակ, նախ այդ մասին պիտի մտածի: Ապա նա խորհուրդ է տալիս մանուկին արի լինել և միշտ «բարի նախանձով» խրատ ու սանձով» կառավարել: Նոյնպէս խրատում է՝ հեռու մնալ կեղծաւոր մարդից և չհագնել նրա «մորթիցը» որովհետեւ՝

Կեղծաւորի բերանն սէվ կարըճի բուն ա,  
Երակնէրն լցրած մահաբեր թոյն ա.  
Կամ՝

Կեղծաւորի սիրտն ստտանի տուն ա,  
Չարութիւն ծաղկունքով դեւի գարուն ա.  
Գարշահոտ բերանն լիքն արուն ա,  
Այն օրն կթափի, երբ ատի քեզի:

3. Միւս կրգերը: Բաց ի յիշած տեսակներից՝ աշուղը թողել է նաեւ մի քանի հատ զիմանական այլաբանութիւններ նի չխտարի և գէլի, մկան ու կատուի. սկեսուրջ և հարսի, երկու տէգէրակնոջ և մի հատ էլ հակադարձ երգ: Ընդամենը հասել է մեր ձեռքը 17 երգ, որոնց հանել ենք

Նոր-Ջուղայում (Պարսկաստան) և կալկաթա (Հնդկաստան) գտնւած ձեռագիր տետրակներէց: Թէ բաց ի յիշեալ երգերէց, արդեօք ուրիշ երգեր էլ ունի՞ Ամիր օղլին, այդ մեզ յայտնի չէ, թէ և հաւանական է:

4. Լեզու և ոճը: Ամիր օղլին սնւած և մեծացած լինելով Նոր-Ջուղայում, իր երգերն էլ, գլխաւորապէս երգիծականները, գրել է Նոր-Ջուղայի բարբառով: Այդ երգերի մէջ իշխում է Ջուղահայերի ոճերն ու դարձւածները, նրանց քերականական ձևերն ու բառերը: Եւ խկապէս այդ երգերը զբաւոր յիշատակարան են Նոր-Ջուղայի բարբառն ուսումնասիրելու համար:

Նրա ոճը պարզ է և ընտիր. լեզուն իր ժամանակի բարբառի համեմատ գեղեցիկ է, որը սակայն կրում է իր մէջ բազմաթիւ պարսկերէն և թրքերէն բառեր:

5. Եզրակացութիւն: Ամիր օղլին Պարսկահայ աշուղական երգիծական գրականութեան աննման երգիչն է: Իրրեւ երգիծաբան, նա իր ժամանակակից ընտանիքի և նրա տիպարների թերութիւնների ու բարոյական թուլութիւնների պատկերն է հանդէս բերում և խարազանում: Խարազանում է նա դարաշրջանի « քաֆէր » պառաւին, բռնակալ սկեսրոջ, աներես

հարսներին, կուարար տէգէրակնոջ, ցոյց տալով նրանց թեթեւամիտ բարքերն ու պակասութիւնները: Եւ այդ ամենը զծում է նա սուր հեգնանքով և երգիծաբանի վարպետ վրձինով:

Դա արդէն բաւական նշանաւոր մի երեւոյթ է պարսկահայ իրականութեան մէջ և զրանով էլ բնորոշւում է աշուղի կատարած դերը:

#### ԵՍ ՔՈ ՍԻՐՈՅՆ

(Ամիր օղլու անտիպ երգերից)

Ես քո սիրոյն մայլը ելամ,  
Խէլք ու միտքս կորցրել ամ.  
Ճանապարհս մոլորել ամ,  
Թէ գոմ տեսնամ քեզի ազիգ:

Քաղցր լեզուդ ինձի խալէց,  
Խեւք ու միտքս զլիսէս քաշէց.  
Թամամ ջանս խալէց, մաշէց,  
Քո խօշտաբ ու խաղն ազիգ:

Խօսման ամ, շուղաբ չես տալման,  
Փառակդ բունէլ ամ լալման.  
Ինձ խաբելով անց աս կալման,  
Ախիրն խղճա ինձի ազիգ:

Չնր երբ ես խոր խոզէց խանեմ,  
Ասա, երբ դու ինձ ճար կանես.  
Գուցէ դեռ էլ յետացանես,  
Մի մոռանալ դու ինձ ազիգ:

Գեղեցկութեամբդ ինձ մաշեցիր,  
Սիրտս դու ինձմէ քաշեցիր.  
Զվան ամ, ինձ չխղճացիր,  
Զեւնեմ քեզնէ կարօտ ազիւզ:

Քո աչքերն բլուլ ջահ ա,  
Յունքէրդ ալմագ շուհար ա.  
Ելայ քեզ ծառայ, ինչ կուզես արա,  
Կեանքս քեզի մատաղ. սիրուն ազիւզ:


Իմ սիրելի, պատուական վարդ,  
Համբոյր խնդրեմ, տուր ինձ անինայ.  
Շունչս զնաց, եմ կիսամահ,  
Վայ թէ մեռնեմ իմ ջան ազիւզ:

Ես քո սիրոյն խորովման ամ,  
Կրակ և բոցում վառման ամ.  
Վայ ինձ քեզնէ հեռման ամ,  
Ելա կարօտ քեզնէ ազիւզ:

Այս երգը ձեռք ենք բերել 1921 թւին  
Հնդկաստանում, Բոմբէյում, ձեռագիր մի  
տաղարանից, որ գրած է 1810 թւին:

Թիֆլիս

22 դեկտ. 1929 թ.



« Ազգային գրադարան



NL0373438

65.692